

մաններուն վրայ կը կոռէին օսմանեան զօրքերուն դէմ: Մահայն, անոնք դուրս չէին գար իրենց սահմաններէն եւ օղնութեան չէին հասներ կեանքի ու մահուան կոռէի բռնուող ուրիշ քրդական փաշայութեան մը:

Այս պառակտումի վիճակին հետեանքն այն եղաւ, որ Հաֆրդ փաշայի ուժերը, եզրիտական բանակին հետ չափուելէն առաջ, քրդական շարք մը զօրաւոր շրջանները ծանրապէս հարուածեցին եւ ընկճեցին. ու երբ թըրքական բանակը ջախջախուեցաւ Նէսիբիի առջեւ, քիւրդերը անպատրաստ դռնուեցան ընդհանուր ապստամբութեան մը ձեռնարկել եւ վերջնական հարուած մը տալ շատ տկարացած թուրքիոյ: Ճէզիրէ-Բոհճմանի եւ Հէքեարիի քրդական զլխաւոր ուժերը թէեւ անվնաս մնացած էին, բայց ասոնք ալ գոհացան այն ժամանակաւոր հանդիստով, որ թըրքական պարտութեան բնական հետեանքն էր: Թուրքիոյ սեղմող բռունցքը կը հեռանար բուն Քիւրդիստանի սահմաններէն, ու քիւրդերը կը բաւականանային իրենց տեղական իշխանապետութեամբ:

* * *

Քաղաքական այդ գերազանցապէս նպաստաւոր վայրկեանէն հայերը չօգտուեցան:

Նախ, ազատագրական քաղաքական ըմբռնումը կը բացակայէր:

Երկրորդ, Թրքահայաստանի ժողովուրդը քաղաքական կեդրոն չունէր եւ եղած ուժերն ալ պառակտուած էին, թերեւս քիւրդերէն աւելի չափով:

Երրորդ, լեռնական հայերը, որոնք որոշ չափով պահած էին կէս անկախութիւն մը եւ կը նմանէին քրդական աշիրէթներուն, անոնք ալ կապուած էին քրդական աւելի զօրաւոր ցեղապետներու շարժումներուն, եւ հետեւարար՝ կը մնային իրարմէ անջատ:

Այս բոլորի վրայ պէտք է աւելցնել չորրորդ պարագայ մը եւս, որ աւելի ծանրակշիռ է: Հայերը, Պոլսէն սկսած մինչեւ նահանգական զլխաւոր քաղաքները, թըրքական օրինաթասիրտ ունէին, աւելի հաւատարիմ էին թըրքական կառավարութեան, քան իսլամ աբարներն ու քիւրդերը, ինչպէս յստակօրէն կ'արտայայտուի Մորզէն:

Այսպիսով, հայ ժողովուրդը կը մնար ան-

տարբեր քաղաքական այդ մեծ անցքերու ժամանակ. չէր կարող ըմբռնել Իբրահիմ փաշայի կործանարար հարուածը, որ կ'իջնէր «հիւանդ մարդու» գլխին, չէր կարող կշռել քրդական ապստամբութիւններու ճակատագրական նշանակութիւնը, Քիւրդիստանի եւ Հայաստանի ազատագրութեան տեսակէտէն: Միւս կողմէ, քիւրդերը, բացի իրենց միացած հայ աշիրէթներէն, միւս մնացած հայերը կը նկատէին ռայեա, իսկ քաղաքներու հայ բնակիչները՝ թուրքին բարեկամ գործակալ: Որով, երկու կողմերն ալ թերացան պատմական վայրկեանը ըմբռնելու, — վայրկեան մը, որ ամենէն նըպաստաւորը կը ներկայանար 19-րդ դարու խոշոր անցքերէն, հայերու եւ քիւրդերու ազատագրութիւնը գլուխ բերելու:

2.

ԲԷԴԻՐՊԱՆ ԲԷՑԻ ՇԱՐԺՈՒՄԸ
ԵՒ ՀԱՅՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

19-րդ դարու սկզբէն թըրքական զինուորական արշաւանքները, մասնաւորաբար Հաֆրդ փաշայի հրամանատարութեան տակ գործող հսկայ բանակի 1837-էն մինչեւ 1839-ի գործողութիւնները մեծապէս ցնցեցին քիւրդազգաբնակչութիւնը: Քիւրդ ցեղապետները, հակառակ իրենց պառակտուած վիճակին եւ ներքին պատերազմներուն, զգացին թըրքական տիրապետութեան ծանր ձեռքը, որ այս անգամ կ'իջնէր շեշտակի կերպով իրենց գլխին:

Հարուածը իր դարաւոր պատահական ըրնոյթը թողած, դարձած էր տեւական զինուորական բացարձակապետութիւն մը Քիւրդիստանի սահմաններէն ներս: Այս գործողութիւնները զօրաւոր թափով մը կը սկսէին 1805-էն ու կ'երկարէին մինչեւ 1840 թուականը: 35 տարուան լարուած կեանքը բաւական էր խելքի բերելու քիւրդ ցեղապետները, զիտակցելու որ թուրք կառավարութեան վերջնական նպատակն էր իշխանութեանէ եւ զինական ուժերէ զրկել քիւրդ ցեղապետները, իսկ անոնք որ տակաւին կը դիմանային, լարել իրարու դէմ ու ներքին կռիւներով ջլատել:

Այս գիտակցութիւնն ու մտահոգութիւնները հետզհետէ սեփականութիւնը կը դառնային քիւրդ բոլոր ցեղերուն, որոնք այս անգամ ինկած չէին Հաֆրդ փաշայի կրունկներուն